ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

DONATE

zinapah.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը

Գործառնությունները 2017 – 2025թթ. 3-րդ եռամսյակ

Ծահառուները և վճարված հատուցումները 2025թ. 3-րդ եռամսյակ

Նվիրատվությունները 2017 – 2025թթ. 3-րդ եռամսյակ

Ծահառուներին միտված աջակցման ծրագրեր գործընկեր կազմակերպությունների հետ

Զարգացում և ֆինանսական անկախություն

2024թ. աուդիտորական հաշվետվություն

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Լարա Չոլակյան
Խորհրդի անդամ

Հասմիկ Եղյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Գոհար Աբրահամյան
Գործառնական տնօրեն

Արմինե Վարդանյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մարիանա Հարությունյան
Ծրագրերի ղեկավար

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Գնումների և դրոշմ. վճարների վերադարձի համակարգող

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

Ռիմմա Հարությունյան
Ժամանակավոր ադմինիստրատիվ օգնական

ՁԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ՁԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ. հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով զինծառայողներին (1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն) կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ՁԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի:** Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ՁԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ՁԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ՁԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- **Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)**
- **Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից**
- **ՁԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված եկամուտից**

ՁԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ՁԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ՁԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ՁԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱԾՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

ԶԻՆԱՊԱՀ համայնքի հարգելի բարեկամներ,

Ամփոփելով 2025թ. երրորդ եռամսյակը (ՅԵՌ)՝ ուրախությամբ պետք է նշեմ, որ այս շրջանը բնորոշվեց Հայաստանի ու սփյուռքի համախմբմամբ՝ ստեղծելով նոր հնարավորություններ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների համար:

Հիմնադրումից ի վեր՝ ԶԻՆԱՊԱՀԸ դարձել է կարևորագույն հաստատություն մեր զինծառայողների և նրանց ընտանիքների համար: 2025թ. 3-րդ եռամսյակի տվյալներով մենք աջակցել ենք 5,505 զինծառայողների, և ընդհանուր հատուցումները գերազանցել են 121.6 միլիարդ ՀՀ դրամը: Մենք ունենք ֆինանսական ամուր հիմք. շուրջ 219.5 միլիարդ ՀՀ դրամ գոյացել է պարտադիր վճարումներից, 35 միլիարդ ՀՀ դրամ՝ ակտիվների կառավարումից, և շուրջ 9.6 միլիարդ ՀՀ դրամ՝ նվիրատվություններից («Կամուրջ» ծրագիրը ներառված չէ):

Այս թվերի ետևում պատմություններ են ոչ միայն ֆինանսական աջակցություն մասին, այլ ազգի, որը հոգ է տանում երկրի պաշտպանների մասին: Հատուցման յուրաքանչյուր դրամ խորհրդանշում է արժանապատվություն, ճանաչում և հայ ժողովրդի՝ իր հերոսներին տված խոստման իրականացում: Մենք շարունակում են կատարել Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ 26%-ով բարձրացված ամսական հատուցման գումարների և լրավճարների տրամադրումը մեր շահառուներին՝ նպատակ ունենալով մեղմել գնաճի արդյունքում առաջացած ֆինանսական բեռը: Այս նախաձեռնությունը երաշխավորում է մեր շահառուների արժանապատիվ և ավելի ապահով կյանքը:

Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԻ սոցիալական ծրագրերի թիմը իրականացրել է մի շարք կարևոր նախաձեռնություններ՝ ի բարօրություն շահառուների: Ստորև ներկայացված են դրանցից մի քանիսը՝ ամենակարևորները:

ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր կազմակերպությունը աջակցեց 6 շահառուների մասնակցությանը Բուլղարիայում կայացած պարաբազկամարտի 27-րդ աշխարհի առաջնությանը: Նրանց հաջողությունը՝ երկու ոսկե և մեկ բրոնզե մեդալ, խորհրդանշում է ոչ միայն բացառիկ մարզական նվաճում, այլև տոկունություն, քաջություն և ազգային հպարտություն:

Ամենամյա «Հայորդի» ամառային ճամբարը Հանքավանում մեկտեղեց զոհված և անհայտ բացակայող զինծառայողների, ինչպես նաև տեղահանված ընտանիքների շուրջ 300 երեխաների: Արդեն 5 տարի շարունակ ճամբարը հանդիսանում է յուրօրինակ միջավայր, որտեղ մասնակիցները ստանում եմ հոգեկան ապաքինում, ձևավորում համայնք և ապրումակցում միմյանց հանդեպ: Ի դեպ, ճամբարի կազմակերպչական մասը իրականացվում է կանանց և կամավորների կողմից՝ միավորված մեկ նպատակի շուրջ:

Շահառուների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով ԶԻՆԱՊԱՀՆ իր կայքում գործարկել է «Օգտակար հղումներ» բաժինը՝ հնարավորություն ստեղծելով շահառուների համար ավելի իրազեկ լինել պետական գործընկերների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի վերաբերյալ, և ապահովելով կրթական, մասնագիտական և սոցիալական աջակցության ռեսուրսների հասանելիություն:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ անցկացված հանդիպումը միավորեց պրոթեզավորման ծառայություններ մատուցողներին և վերին ու ստորին վերջույթները կորցրած շահառուներին: Զրույցը գործնական էր, ուղղված լուծումների որոնմանը և միտված էր սոցիալական ներառմանը և վերաինտեգրմանը:

Մենք մշտապես առաջնորդվում ենք ԶԻՆԱՊԱՀԻ արժեքներով՝ թափանցիկություն, հաշվետվողականություն և բարեվարքություն: Յուրաքանչյուր որոշում կայացնում ենք մեծ հոգատարությամբ, յուրաքանչյուր դրամ ծախսում ենք խնամքով ու մտածված և յուրաքանչյուր քայլ նախաձեռնելիս առաջնորդվում ենք այն վստահության զգացումով, որը մեզ փոխանցվել է Հայաստանի մեր հայրենակիցների և սփյուռքահայության կողմից:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր իրականություն են դարձնում ԶԻՆԱՊԱՀԻ առաքելությունը. Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացու և նվիրատուի, ինչպես նաև ՀՀ Կառավարությանը, մեր գործընկեր կազմակերպություններին, ԶԻՆԱՊԱՀԻ հոգաբարձուների խորհրդին և թիմին իրենց ջանքերի և նվիրված աշխատանքի համար:

Մեզ միավորում է նպատակը, վճռականությունը և անսասան նվիրումը այն մարդկանց, ովքեր այդքան թանկ են վճարել մեր հայրենիքի համար:

Խորին հարգանքով և գնահատանքով՝
Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ հիմնադրամ

ՋԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2025ԹԹ.
Սահող գնահատականով (ՍԳ)

ՋԻՆԱՊԱՀԻ 2025թ. ԵՌՅ-ի հաշվետվությունը ամփոփում է հիմնադրամի ֆինանսական արդյունքներն ու միտումները՝ համադրված նախորդ տարիների փաստացի տվյալների և կանխատեսումների հետ:

Կանխատեսվում է, որ ընդհանուր եկամուտը կայուն աճ է գրանցելու 2025թ.՝ 44.2 միլիարդ ՀՀ դրամից (2017-2025թթ.) հասնելով 59.5 միլիարդ ՀՀ դրամի՝ կազմելով տարեկան շուրջ 8% աճ և շուրջ 35% ընդհանուր աճ: 2017-2025թթ. կանխատեսվում է, որ ընդհանուր եկամուտը կհասնի 281.6 միլիարդ ՀՀ դրամի, ինչը վկայում է երկարաժամկետ կայուն ֆինանսական աճի և եկամուտների դիվերսիֆիկացման բարելավման մասին:

Հիմնական եկամտի աղբյուրը պարտադիր վճարումներն են՝ տարեկան ապահովելով ընդհանուր եկամուտների 79-83%-ը: 2025թ. ակնկալվում է, որ պարտադիր վճարներներից եկամուտը կհասնի 46.97 միլիարդ ՀՀ դրամի՝ 2024թ. համեմատ գրանցելով 3% աճ: Պարտադիր վճարները ապահովում են ՋԻՆԱՊԱՀԻ հիմնական եկամտային հոսքը և շահառուների ընդգրկման շարունակական ընդլայնումը:

Ակտիվների կառավարման եկամուտները կանխատեսվում է, որ կգրանցեն նշանակալի աճ՝ 4.97 միլիարդ ՀՀ դրամից (2017–2020 թթ.) հասնելով 12.31 միլիարդ ՀՀ դրամի (2025թ. ՍԳ), ինչը տարեկան կտրվածքով կազմում է մոտ 32% աճ: Եկամուտի այս աղբյուրի մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում կբարձրանա 17%-ից (2024թ.) մինչև 20.7% (2025թ.), ինչը վկայում է արդյունավետ ներդրումային կառավարման և կուտակված ակտիվներից ավելի բարձր եկամտաբերության մասին:

Նվիրատվությունները կցուցադրեն կտրուկ նվազում. 2025թ. կանխատեսումները ցույց են տալիս տարեկան -33% անկում:

Կանխատեսվում է, որ ՋԻՆԱՊԱՀԻ ընդհանուր ծախսերը կունենան փոփոխական, սակայն վերահսկվող միտում՝ 2025թ. նվազելով 8%-ով և կազմելով մոտ 20.1 միլիարդ ՀՀ դրամ՝ 2024 թ. զգալի բարձր ցուցանիշից հետո:

Շահառուներին տրամադրվող հատուցումները կշարունակեն կազմել ընդհանուր ծախսերի գերակշիռ մասը (98%)՝ ցուցադրելով 8% նվազում 2024թ. համեմատ՝ պայմանավորված 2024 թ. կատարված օրենսդրական փոփոխությունների հետևանքով միանվագ հատուցումների վճարումներով:

Կանխատեսվում է, որ վարչական ծախսերը կաճեն 10%-ով, սակայն դրանց մասնաբաժինը ընդհանուր ծախսերում կշարունակի մնալ ընդամենը 2%: Գործառնական ծախսերը (OpEx) աճել են 23%-ով, սակայն դրանց ծավալը շարունակում է մնալ մոտ 0.2%-ի սահմաններում:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017-2020***	2021	2022	2023	2024	2025 ՍԳ	2017-2025 ՍԳ	2025 ՍԳ 2024-ի համեմատ	% հարաբ 2024	% հարաբ 2025
Եկամուտ պարտադիր վճարներից	30,914	29,072	35,274	43,199	45,393	46,967	230,820	3%	83%	79%
Նվիրատվություններ	7,280	1,290	508	273	171	115	9,638	-33%	0.31%	0.19%
Կամուրջ նվիրատվություն*	1,000	1,510	239	237	86	66	3,138	-23%	0.16%	0.11%
ՀՀԿԲ**	-	301	-	-	-	-	301	NA	NA	NA
Ակտիվների կառավարում	4,970	1,841	3,256	5,944	9,339	12,309	37,659	32%	17%	20.70%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0.24	0.19	0.26	0.29	0.37	1.35	30%	0.001%	0.001%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**44,164**	**34,015**	**39,278**	**49,654**	**54,990**	**59,457**	**281,557**	**8%**	**100%**	**100%**
Հատուցումներ	9,664	44,484	16,878	14,747	21,489	19,729	126,990	-8%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	246	267	316	349	1,178	10%	1%	2%
Գործառնական ծախսեր	0	149	21	25	39	42	272	23%	0%	0.2%
Այլ	-	-	-	-	-	-	-	NA	NA	NA
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**9,665**	**44,633**	**17,146**	**15,039**	**21,838**	**20,119**	**128,440**	**-8%**	**100%**	**100%**

***Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՋԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 58 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

***** Ներառում է 2008-2016թթ. դեպքերի մասով հատուցումները**

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2025թթ. 3-ՐԴ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2025թթ. ԵՌ3-ի սահող գնահատականով եկամուտը և ծախսերը արտացոլված են գրաֆիկում՝ ըստ տարիների:

2025թ. նախորդ տարվա համեմատ ակնկալվում է ընդհանուր եկամտի 8% աճ՝ կազմելով 59,457 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր ծախսերը 2024թ. համեմատությամբ կնվազեն 8%-ով՝ կազմելով 20,119 մլն ՀՀ դրամ:

2017-2025թթ. ընդհանուր եկամուտը զգալիորեն աճել է, շուրջ 10 անգամ՝ **~6.2 միլիարդ ՀՀ դրամից հասնելով ~59.5 միլիարդ ՀՀ դրամի**: Ամենամեծ աճը գրանցվել է 2020-2021թթ.՝ պայմանավորված դրոշմանիշային վճարների բարձրացման օրենսդրական փոփոխությամբ և ակտիվների կառավարումից ձևավորված եկամտի աճով: Սա արտացոլում է հիմնադրամի ընդլայնվող ֆինանսական հիմքը և երկարաժամկետ կայունությունը:

Ծախսերը կտրուկ աճ են գրանցել 2021թ.՝ հասնելով 44.6 միլիարդ ՀՀ դրամի, և կայունացել են՝ կազմելով 20.1 միլիարդ ՀՀ դրամ 2025թ.: Ծախսերի նվազումը վկայում է շահառուներին տրամադրվող հատուցումների կայունություն:

Արդյունքում եկամուտների և ծախսերի միջև տարբերությունը զգալիորեն աճել է՝ ապահովելով ԶԻՆԱՊԱՀԻ համար ուժեղ և աճող ֆինանսական ավելցուկ: Այս ավելցուկը ընդգծում է կազմակերպության ֆինանսական կայունությունը՝ երաշխավորելով, որ հիմնադրամը կարող է երկարաժամկետ հեռանկարում կայունորեն իրականացնել իր պարտավորությունները՝ միաժամանակ ձևավորելով պահուստներ ապագա զարգացման համար:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2025թթ. ՍԳ եկամուտը ծախսերի համեմատ. 3 ԵՌ դրությամբ մլն ՀՀ դրամ



ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2025ԹԹ. 3-ՐԴ ԵՌ 2024Թ. ՀԱՄԵՄԱՏ

2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկել է ամուր ֆինանսական հիմքով՝ արտացոլելով ֆինանսական արդյունավետ կառավարում և պարտադիր դրոշմանիշային վճարների կայուն մուտքեր: 2025թ. 3 ԵՌ դրությամբ ընդհանուր եկամուտը կազմում է 14.199 միլիարդ ՀՀ դրամ: Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից իրականացվող տեխնիկական աշխատանքներով պայմանավորված պարտադիր դրաշմանիշային վճարների փոխանցումները ԶԻՆԱՊԱՀԻՆ հաշվետու ժամանակաշրջանում եղել են անկայուն, ինչպես նաև գրանցվել է նվիրատվությունների անկում:

Պարտադիր դրաշմանիշային վճարները գրանցել են 21% անկում նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 10.847 միլիարդ ՀՀ դրամ և պահպանելով եկամտի ամենամեծ մասնաբաժինը՝ 76%:

Ակտիվների կառավարումից ձևավորվող եկամուտը 39% աճ է գրանցել՝ կազմելով 3.311 միլիարդ ՀՀ դրամ: Կանխատեսվող 32% տարեկան աճը ազդարարում է ակտիվների արդյունավետ կառավարման մասին:

Մյուս կողմից նվիրատվությունները (առանց Կամուրջ ծրագրի) կտրուկ անկում են գրանցել՝ 32%-ով, և կանխատեսվում է, որ կկազմեն 115 միլիոն ՀՀ դրամը 2025թ.: Չնայած նվիրատվություններն ընդհանուր եկամտի ընդամենը 0.1% են կազմում, մենք կարևորում ենք այդ նվիրատվությունները և ընդունում որպես հանրության աջակցության և մասնակցության կարևորագույն դրսևորում:

Ինչ վերաբերում է ծախսերին, ընդհանուր ծախսերը նվազել են -8%-ով 2025թ. 3-րդ ԵՌ և կազմում են 4.9 միլիարդ ՀՀ դրամ: Այս անկումը պայմանավորված է հատուցման գումարների -8% նվազմամբ, որը կազմում է 4.8 մլրդ ՀՀ դրամ ԵՌ 3-ում:

Եկամուտների աճի և վերահսկվող ծախսերի ներքո ԶԻՆԱՊԱՀԸ պահպանում է ամուր և կայուն ֆինանսական դիրք՝ ապահովելով մեր շահառուներին տրամադրվող ֆինանսական հատուցումները և կարողանալով արձագանքել առաջացող կարիքներին:

ՄԼՆ, ԴՐԱՄ	ԵՌ 1 2025	ԵՌ2 2025	ԵՌ3 2025	2024 ԵՌ1-4	2025 ԵՌ1-4 ՍԳ	2025 ՍԳ ՀԱՄԵՄԱՏ 2024	ԵՌ3'25 ՀԱՄԵՄԱՏ ԵՌ3'24	% հարաբ ԵՌ3'24	% հարաբ ԵՌ3'25
Եկամուտ պարտադիր վճարներից	12,679	12,081	10,847	45,393	46,967	3%	-21%	85%	76%
Նվիրատվություններ	34	39	15	171	115	-33%	-32%	0.1%	0.1%
Կամուրջ նվիրատվություն*	7	13	25	86	66	-23%	-11%	0.2%	0.2%
ՀՀԿԲ**	-	-	-	-	-	NA	NA	0%	0%
Ակտիվների կառավարում	2,848	2,986	3,311	9,339	12,309	32%	39%	15%	23%
Այլ եկամուտներ տուգանքներից	0.09	0.30	0.12	0.29	0.37	30%	NA	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	15,569	15,120	14,199	54,990	59,457	8%	-13%	100%	100%
Հատուցումներ	4,819	4,768	4,815	21,489	19,729	-8%	-2%	98%	98%
Կապ. ծախսեր	76	84	83	316	349	10%	13%	1.5%	1.7%
Գործառնական ծախսեր	9	12	8	34	42	23%	14%	0.1%	0.2%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	4,903	4,864	4,907	21,838	20,119	-8%	-2%	100%	100%

***Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 58 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2025թ. ՍԳ համեմատությունը 2017-2025թթ. ՍԳ ամփոփ պատկերով

2017-2025 ՍԳ

- **Պարտադիր վճարների 20% կստացվի** 2025թ.՝ գրանցելով 5% աճ 2024թ. համեմատ:
- **Նվիրատվությունները փոքրիկ մաս են կազմում՝ ընդամենը** 1%՝ ի հակադրություն նախորդ տարիների և հատկապես 2020թ., քանի որ դրամահավաքին ուղղված նախաձեռնություններ չեն իրականացվում:
- **Ակտիվների կառավարման եկամտի 33%-ը կստացվի** 2025թ. ըստ ՍԳ-ի: Անկայուն նվիրատվությունների պարագայում ակտիվների կառավարումից ստացված եկամուտը հանդիսանում է ամուր ռազմավարական հիմք և ապահովում է կայուն հոսքեր:
- **Հատուցումների 16%** կվճարվեն 2025թ.՝ մնալով կայուն:

Ակտիվների կառավարումից և պարտադիր դրոշմանիշային վճարներից ձևավորված եկամուտը կազմում է ընդհանուր եկամտի 99.6%-ը՝ ապահովելով ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական միջոցների ձևավորումը տարբեր ուղիներով նույնիսկ նվիրատվությունների նվազման պարագայում:

ՄԼՆ ՀՀ դրամ	2024	2025 ՍԳ	2017-2025 ՍԳ	% հարաբ. 2025 ՍԳ
Պարտադիր վճարներ	45,393	46,967	230,820	20%
Նվիրատվություններ	171	115	9,638	1%
Ակտիվների կառավարում	9,339	12,309	37,659	33%
Հատուցումներ	21,489	19,729	126,990	16%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2025թ. 3-րդ ԵՌ

- **2017-2025թթ. ԵՌ 3-ում** ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,505** շահառուների:
- 2025թ. ԵՌ 3-ում հատուցվել են **8 նոր դեպքեր՝ 2024թ. նույն ժամանակահատվածի 35 դեպքերի փոխարեն, որոնք դարձել են ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներ Արցախի 2023թ. սեպտեմբերի էսկալացիայի արդյունքում:**

2025թ. ԵՌ 3-ում 8 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
6	1	0	1

2017-2025 ԵՌ 3-ում 5,505 ընդհանուր հատուցումների բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
4,563	252	151	538

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2025ԹԹ. 3-ՐԴ ԵՌ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,505 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին վճարված հատուցումները 2017-2025թթ. 3-րդ ԵՌ

2017-2025թթ. 3-րդ ԵՌ կտրվածքով **5,505 դեպքերով հատուցումները** ստորև բաշխված են ըստ շահառուների դասակարգման:

43%-ը ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **19%-ը** զորահավաքային շարքայիններ և սպաներ, **30%-ը** պայմանագրային շարքայիններ և սպաներ և **8%-ը** կամավորներ:

2017-2025թթ. 3-ՐԴ ԵՌ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,505 ԴԵՊՔՈՎ





2017-2025ԹԹ. 3-ՐԴ ԵՌ. ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

8

ՆՈՐ հատուցման դեպքեր 2025թ. ԵՌ 3-ում և 5,505 դեպքեր 2017-2025թթ. ԵՌ 3-ում

4.8մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2025թ. ԵՌ 3-ում

121.6մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2025թթ. 3-րդ ԵՌ դրությամբ՝ զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության իրավունքով շահառուներին

5%

պարտադիր վճարների աճ 2025թ. ԵՌ 1-3-ում՝ 2024թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2025թթ 3-րդ ԵՌ դրությամբ

2017-2025թթ. 3-րդ ԵՌ դրությամբ ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները (առանց Կամուրջ ծրագրի) կազմում են շուրջ 9.6 մլրդ ՀՀ դրամ: 2017թ. ի վեր նվիրատվությունների քանակը կազմում է 94,364, իսկ միջին նվիրատվության գումարը՝ 102,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ: Նվիրատվությունները նվազել են 2020թ. պատերազմում գրանցած առավելագույն շեմից, և նվազման միտումը շարունակվում է:

2025թ. 3-րդ ԵՌ նվիրատվությունների գումարը համեմատած 2024 թ. նույն ժամանակահատվածի հետ նվազել է -32%-ով: Նվիրատվությունների քանակը նվազել է 46%-ով: Նվիրատվությունների քանակը տարեվերջում գնահատվում է, որ կնվազի 2,341-ի՝ 2024թ. 4,167-ի համեմատ: Դա բացատրվում է հետպատերազմյան նվազումով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրատվությունները սովորաբար կտրուկ աճում են, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող պատժամիջոցներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև **www.zinapah.am** կայքի միջոցով:

2017-2025թթ. ՍԳ նվիրատվությունները դրամով և քանակով



ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2025թթ 3-րդ ԵՌ դրությամբ

2017-2025թթ. նվիրատվությունները ըստ արժույթի							
Փոխարժեք 000	2017-2020	2021	2022	2023	2024	2025 ՍԳ	2025 ՍԳ 2024 համեմատ
ՀՀ դրամ	4,676,538	739,093	301,333	173,750	87,564	76,297	-13%
Դոլար	4,833	879	492	233	191	89	-54%
Ռուբլի	115,069	6,517	455	1	2	-	-
Եվրո	798	122	34	20	31	8	-74%
2017-2025թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով							
	7,280,467	1,290,065	508,062	273,307	171,279	114,565	-33%
Նվիրատվությունների քանակ	44,576	25,976	12,665	5,209	4,167	2,341	-44%
Նվիրատվությունների միջին չափը	163	50	40	52	41	49	19%

2017-2025թթ. նվիրատվությունները ըստ արժույթի			
Փոխարժեք 000	2024 ԵՌ3	2025 ԵՌ3	2025 ԵՌ3 համեմատ. 2024 ԵՌ3
ՀՀ դրամ	19,058	11,829	-38%
Դոլար	16	8	-49%
Ռուբլի	-	-	N/A
Եվրո	5	1	-77%
2017-2025թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով			
	22,736	15,468	-32%
Նվիրատվությունների քանակ	951	515	-46%
Նվիրատվությունների միջին չափը	24	30	26%

Գործընկերային կապերի հաստատում և ընդլայնում

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ամրապնդել իր գործընկերային կապերը հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և բարեգործական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով աջակցել զինծառայողներին և նրանց ընտանիքներին: Այս գործընկերությունները միտված են շահառուների սոցիալական, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցության ապահովմանը՝ համակարգային և շարունակական նախաձեռնությունների միջոցով:

Շահառուների անձնական զարգացմանն ու երկարաժամկետ բարեկեցությանը նպաստելու նպատակով ԶԻՆԱՊԱՀԸ իր գործընկեր կազմակերպությունների հետ նախաձեռնել է սոցիալական ինտեգրման և զարգացման մի շարք ծրագրեր, որոնց համար մշակվել է ամբողջական պլան՝ 2025թ. առաջնահերթություններով:

ԶԻՆԱՊԱՀԸ բազմաթիվ խորհրդակցական հանդիպումներ է կազմակերպել պետական մարմինների, ՀԿ-ների և գործընկեր հիմնադրամների հետ՝ միավորելու ջանքերը հետևյալ ուղղություններով՝

- **Կրթություն և հմտությունների զարգացում**
- **Տնտեսական ինտեգրում և զբաղվածություն**
- **Ձեռնարկատիրություն և բիզնեսի խթանում**
- **Համայնքային ընդգրկում և կայունության ձևավորում**

Հավատարիմ իր առաքելությանը՝ ԶԻՆԱՊԱՀԻ աջակցությամբ և միջնորդությամբ մի շարք համատեղ նախաձեռնություններ են իրականացվել տարբեր կազմակերպությունների հետ գործընկերությամբ: Այս նախաձեռնությունները նպատակ ունեն տրամադրել թիրախավորված աջակցություն և համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև խթանել շահառուների սոցիալական ինտեգրումը Հայաստանի ողջ տարածքում:

Համագործակցություն Հայ-շվեցարական հյուրընկալության ակադեմիա

Հայ-շվեցարական հյուրընկալության ակադեմիան հայտարարում է 2025թ. աշնան ընդունելությունը՝ կրթաթոշակի հնարավորությամբ:

ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր **Հայ-շվեցարական հյուրընկալության ակադեմիան** պաշտոնապես հայտարարել է 2025թ. աշնանային ուսումնական շրջանի ընդունելության մեկնարկը: Ակադեմիան առաջարկում է ամբողջական և մասնակի կրթաթոշակներ՝ ԶԻՆԱՊԱՀԻ այն շահառուների համար, ովքեր 2025թ. զորացրվել են պարտադիր զինվորական ծառայությունից, ինչպես նաև Արցախից բռնի տեղահանված անձանց համար:

Ակադեմիայում առաջարկվում է մասնագիտական կրթություն հյուրանոցային ոլորտի 3 հիմնական ուղղություններով՝ խոհարարական արվեստ, ռեստորանային սպասարկում և հյուրանոցային կառավարում: Ուսուցումը համահունչ է միջազգային ստանդարտներին և ուղղված է Հայաստանի աճող հյուրընկալության և տուրիզմի ոլորտում կարիերա կառուցել ցանկացող ուսանողների պատրաստմանը:

Համագործակցության արդյունքում ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները հնարավորություն են ստացել դիմել Հայ-շվեցարական հյուրընկալության ակադեմիա բարձրորակ կրթություն ստանալու նպատակով: Ի լրումն, շուրջ 20 շահառու արդեն օգտվել է ոլորտի խորհրդատվական ծրագրերից HoReCa ոլորտում մասնագիտական կողմնորոշման նպատակով:

SWISS ARMENIAN ACADEMY OF HOSPITALITY

Համագործակցություն «ՀԱՅՈՐԴԻ» բարեգործական հիմնադրամի հետ

«ՀԱՅՈՐԴԻ» բարեգործական հիմնադրամի ամառային ճամբարն այս տարի հյուրընկալեց 300 երեխաների 7-օրյա ճամբարը գործեց 3 փուլով՝ յուրաքանչյուր փուլում հյուրընկալելով 5-13 տարեկան 100-ական երեխաների՝ զոհված և անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների (2016–2023թթ.) ընտանիքներից, Արցախից բռնի տեղահանված, ինչպես նաև Արցախում տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած ընտանիքներից:

Ճամբարի ծրագրում ընդգրկված էին թե՛ կրթական, և թե՛ ժամանցային բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ կինոդիտումներ, էքսկուրսիաներ, արվեստաբանական թերապիա, առաջին օգնության ուսուցում, հոգեբանական սեմինարներ, ազգային երգ ու պար, ինչպես նաև կենդանի համերգներ՝ սիրված կատարողների մասնակցությամբ: Համերգային օրերին ճամբար հրավիրվեցին նաև երեխաների մայրերը՝ որպես հատուկ հյուրեր՝ ապահովելով ջերմ և համայնքային մթնոլորտ:

ԶԻՆԱՊԱՀՆ ապահովել է շահառուների իրազեկումը և ընդգրկումը ճամբարին:

Հայ մարզիկները փայլեցին Բուլղարիայում կայացած 27-րդ աշխարհի առաջնությունում

ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր «Ժառանգություն և առաջընթաց» հիմնադրամի աջակցությամբ ԶԻՆԱՊԱՀԻ շահառու վեց մարզիկներ Սարգիս Ստեփանյանի ղեկավարությամբ սեպտեմբերի 10-23-ը ներկայացրեցին Հայաստանը Ալբենա քաղաքում (Բուլղարիա) կայացած պարաբազկամարտի 27-րդ աշխարհի առաջնությունում:

Հայաստանի հավաքականը հանդես եկավ փայլուն արդյունքներով՝

- **2 ոսկե մեդալ**
- **1 բրոնզե մեդալ**

Պարաբազկամարտի այս հեղինակավոր միջազգային միջոցառումը հարթակ հանդիսացավ հայ մարզիկների տաղանդը, տոկունությունն ու կամքի ուժն աշխարհին ներկայացնելու համար: Նրանց հաղթանակները վկայում են հայրենասիրության, նվիրումի և ոգու անսասան ուժի մասին՝ միջազգային հարթակում վեր բարձրացնելով Հայաստանի դրոշը:

Քննարկում վերին վերջույթների ամպուտացիա ունեցող զինծառայողների պրոթեզավորման կարիքների վերաբերյալ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ԶԻՆԱՊԱՀԻ հետ համագործակցությամբ հյուրընկալեց թեմատիկ հանդիպում՝ նպատակ ունենալով քննարկել վերին վերջույթների ամպուտացիա ունեցող ԶԻՆԱՊԱՀ շահառուների առջև ծառացած մարտահրավերները:

Հանդիպմանը մասնակցեցին շահառուներ և Հայաստանում գործող պրոթեզավորման ընկերությունների ներկայացուցիչներ: Ընկերությունները ներկայացրեցին ժամանակակից և ֆունկցիոնալ նոր պրոթեզային մոդելներ: Շահառուները բարձրաձայնեցին առկա պրոթեզների հարմարավետության, կիրառելիության և անհատական հարմարվելու հետ կապված խնդիրները:

Մի շարք հարցեր լուծում ստացան անմիջապես հանդիպման ժամանակ, որոշ հարցեր գրանցվեցին հետագա մշտադիտարկման և լուծումների համար: Բացի պրոթեզավորումից, մասնակիցները բարձրացրեցին նաև սոցիալական և բարեկեցության հետ կապված իրենց մտահոգությունները, որոնք արձանագրվեցին՝ համապատասխան պետական մարմինների հետ հետագա քննարկման և անդրադարձի նպատակով:

Հանդիպումն արդյունավետ քայլ էր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող զինծառայողների վերականգնման և կյանքի որակի բարելավմանը:

Շահառուների հետ հանդիպումներ

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է շահառուների հետ հանդիպումների շարքը՝ նպատակ ունենալով ամրապնդել իր առաքելությունը և բարձրացնել շահառուների ներգրավվածությունը

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է հանդիպումների շարքը շահառուների հետ՝ նպատակ ունենալով ամրապնդել կազմակերպության առաքելությունը, բարձրացնել շահառուների իրազեկվածությունն իրենց իրավունքների, գործող ծրագրերի և մատուցվող ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև խթանել երկկողմ հաղորդակցությունը: Հանդիպումները նաև կարևոր հարթակ են հանդիսանում շահառուների մտահոգությունները լսելու և դրանց ուղղակի պատասխաններ տրամադրելու համար՝ հատուկ հարցուպատասխանի հատվածի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում նման հանդիպում է կազմակերպվել Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքում:

Հանդիպման ընթացքում բարձրաձայնված հիմնական հարցերն ու առաջարկությունները՝

- **Բնակարանային աջակցության ծրագրերի ընդլայնման անհրաժեշտություն**
- **Առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավում**
- **Մինչև 2017թ. ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դարձած ընտանիքներին հատուցման միանվագ գումարի տրամադրում**

Այս հանդիպումները ևս մեկ անգամ ընդգծում են, որ շահառուները շարունակում են բախվել բազմաթիվ խնդիրների, որոնք պահանջում են հստակեցում, պաշտպանություն և աջակցություն: Այսպիսի կանոնավոր հանդիպումներն արդյունավետ միջոց են այդ հարցերին արձագանքելու, վստահություն ձևավորելու և շահառուների կարիքներին համահունչ լուծումներ մշակելու համար:

Zinapah.am կայքում «Աջակցող ծրագրեր» ենթաբաժին

2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ իր պաշտոնական կայքում ներկայացրեց նոր ենթաբաժիններ՝ «Աջակցող ծրագրեր» և «Օգտակար հղումներ»: Այս հարթակներում պարբերաբար թարմացվում է ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր կազմակերպությունների և ՀՀ պետական կառույցների կողմից իրականացվող նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները կարող են դիմել և մասնակցել այս ենթաբաժնում ներկայացված ծրագրերին ու նախաձեռնություններին, ինչը ստեղծում է նոր հնարավորություններ՝ աջակցություն ստանալու և զարգացման ուղիներ բացահայտելու համար:

Շահառուների հետ մարզային հանդիպումների ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ նաև ներկայացնում է տվյալ հարթակը՝ իրազեկելով շահառուներին իրենց հասանելի հնարավորությունների մասին:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր ՀՀ Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով: 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվել է ԿԲ-ից՝ դառնալով անկախ իրավաբանական անձ իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- Ղեկավար մարմին՝ Հոգաբարձուների խորհուրդը 7 անդամներով
- Գործառնական թիմ՝ 14 հոգուց բաղկացած անձնակազմ
- Կառուցվածքային փոփոխություն՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույցի հիմնական իրավասությունների և սոցիալական ծրագրերի վրա՝ համագործակցելով ՀՀ կառավարության հետ
- Անձնակազմի կատարողականի և գնահատման թվային Teamflect համակարգի իրագործում

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ իրազեկվածության բարձրացման արշավի մեկնարկ
- ZINHUB միասնական հարթակի ինտեգրում e-work հարթակին
- 2024թ. աուդիտի հաշվետվության հրապարակում

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայություններ
- Զանգերի կենտրոնի ծառայություններ
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի թողարկում. թերությունների շտկման փուլ
- Ֆինանսական ենթակառուցվածքի մշակում հատուցումների ծրագրի հենքով. վաղ փուլ՝ տեխնիկական առաջադրանքի մշակում
- Ռեկոնսիլիացիայի համապարփակ ծրագիր. մեկնարկային փուլ

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ զինհաշմանդամություն ունեցող շահառուների աջակցող միջոցների ծրագրի իրականացում. օրենսդրական փոփոխությունների փուլ

ԶԻՆԱՊԱՀԻ 2024թ. աուդիտն իրականացրել է **«ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն**, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	31.12.2024	31. 12. 2023
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		66,645	94,691
Ոչ նյութական ակտիվներ		50,869	14,885
Ներդրումային արժեթղթեր	4	10,500,290	2,573,923
Բանկերում տեղաբախշված միջոցներ	5	38,495,371	27,378,861
		49,113,175	30,062,360
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		19,988	28,617
Ներդրումային արժեթղթեր	4	848,631	42,579
Բանկերում տեղաբախշված միջոցներ	5	61,228,055	44,710,738
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6	1,881,288	5,519,741
		63,977,962	50,301,675
Ընդամենը ակտիվներ		113,091,137	80,364,035
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	145,563,759	103,724,845
Վարձակալության գծով պարտավորություն		3,664	19,861
		145,567,423	103,744,706
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	17,944,955	13,101,671
Վարձակալության գծով պարտավորություն		21,774	23,561
Կրեդիտորական պարտքեր		27,375	14,948
		17,994,104	13,140,180
Զուտ ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	8	112,168	(27,357)
Կուտակված վնաս		(50,582,558)	(36,493,494)
		(50,470,390)	(36,520,851)
Ընդամենը՝ պարտավորություններ և զուտ ակտիվներ		113,091,137	80,364,035

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	2024թ.	2023թ.
Եկամուտներ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	45,650,543	43,709,476
Տոկոսային եկամուտ	10	9,338,679	5,952,073
Այլ եկամուտներ		518	697
		54,989,740	49,662,246
Ծախսեր			
Հատուցումների գծով ծախսեր	13	(20,541,220)	(3,436,956)
Հատուցումներ աշխատակիցներին		(162,068)	(132,110)
Մաշվածություն և ամորտիզացիա		(34,528)	(34,600)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ծախս, զուտ	11	(583,819)	(228,394)
Ֆինանսական ծախս	12	(47,634,148)	(7,064,627)
Այլ ծախսեր		(122,781)	(94,772)
Փոխարժեքային տարբերություններից (վնաս)/օգուտ, զուտ		(240)	252
		(69,078,804)	(10,991,207)
Տարվա (վնաս)/շահույթ		(14,089,064)	38,671,039
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ/(վնաս)		90,983	32,521
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		48,542	(2,292)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական եկամուտ/(ծախս)		139,525	30,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական (վնաս)/եկամուտ		(13,949,539)	38,701,268

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**(57,586)**	**(75,164,533)**	**(75,222,119)**
Տարվա շահույթ	-	38,671,039	38,671,039
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	-	30,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	38,671,039	38,701,268
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(27,357)**	**(36,493,494)**	**(36,520,851)**
Տարվա շահույթ	-	(14,089,064)	(14,089,064)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	139,525	-	139,525
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	139,525	(14,089,064)	(13,949,539)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**112,168**	**(50,582,558)**	**(50,470,390)**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրատվություններ	45,650,768	43,709,476
Տրված հատուցումներ	(21,489,420)	(14,746,687)
Աշխատանքի վճարմանն ուղղված ծախսեր	(117,697)	(99,729)
Այլ եկամուտներ	-	340,809
Այլ ծախսեր	(209,373)	(513,676)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**23,834,278**	**28,690,193**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,350)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(67,400,910)	(59,908,431)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	(6,460,138)	(1,997,423)
Ներդրումներ ոչ պետական պարտքային արժեթղթերում	(2,009,968)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	41,556,497	30,000,000
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	-	1,267,377
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	6,393,137	4,944,405
Պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	450,000	134,123
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(27,472,732)**	**(25,559,949)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(3,638,454)**	**3,130,244**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	5,519,741	2,389,638
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1	(141)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**1,881,288**	**5,519,741**

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ